

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիելեան

Ներկայ թուոյ մեր քննադատական յօդուածին այն մասն որ սոսիալ-դեմոկրատ (Հնչակեան) կուսակցութեան վերաբերեալ է, պիտի անհաճոյ երեւի ոմանց, այլ տարակոյս չունի՜մք թէ զգօնամիտ անդամք պիտի գտնեն հոն ուշադրութեան արժանի առարկութիւններ, որոց բարձմամբն այդ ընկերակցութիւն պիտի կրնայ հզօրագոյն ուժի և մեծագոյն ազդեցութեան տիրանալ շուտով։ Ոչ ոք քան զմեզ աւելի համակրող է այդ կուսակցութեան, որոյ առաւելութիւններն ցարդ երեւցած ընկերութեանց վերայ լիովին կը գնահատեմք, սակայն կը փափաքիմք որ այդ ընկերութեան զարգացման աւելորդ արգելքներն վերցուն։

*

* *

Սալոնիկէն Տէյլի Նիւզի կը գրեն թէ վերջերս այդ տեղւոյն մօտ սոսկալի ոճիր մի պատահած է որոյ մասին խօսիլ կը վախէ ոմեն ոք առ ահի կառավարութեան։ Ծովն այդ քաղաքին մօտ պարկերու մէջ 15ի չափ դիակներ դուրս նետեր է առանց գլխոյ։ Թէ ո՛վ են սպանեալք, որոշելու նշան չկայ, բայց կը կարծուի թէ քաղաքական յանցանք բանտարկեալք լինին զորս օսմանեան չոգենաւ մի փոխադրած և ծովն նետած լինի։

Հետեւեալ հեռագիրն ուղղուած է Վիէնայէն առ Անդլիկական ընկերութիւնն Լոնտոնի։

Վիէնա, Սեպտ. 8 - Հայ պատուիրակաց ազգային խորհրդակցութիւնն այդ առաւոտ վերջացաւ՝ յետ ընդունելոյ կարգ մի առաջարկութիւններ ի մասին Տէրութեանց միջամտութեան յԱսիական թուրքիա և եւրոպական մամլոյն օգնութեան։ Երրորդէմի Հայ պատրիարքն կոչուած է Սուլթանին հետ խորհրդակցելու։ Կ'անեն թէ տերութեանց մի քանին կը ձայնակցին Անգլիոյ ի պահանջել որ միջազգային Յանձնախումբ մի կազմուի գործադրել տալու վարչական և դատական բարենորոգումներ թուրքիոյ Հայ գաւառաց մէջ և քննելու բանտարկելոց դէպքերն։

*

* *

Լոնտոնի Թայմզին կը հեռագրեն Կ. Պոլսէն Սեպտ. 9ին։

Այաշկերտի և Բասենի դաշտերէն Հայոց գաղթումն ի Ռուսիա կը շարունակէ։ Ռուսական իշխանութիւնք դէմ կը դնեն առարկելով թէ այդ չքաւոր ընտանիքներն տեղաւորելու հող չկայ, և սոքա ալ կը յայտարարեն թէ անկարելի լինելով իրենց ի թուրքիա վերադառնալ՝ պէտք է սովամահ կորնչին։



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հայոց
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն :

«Հայք»-ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգիրն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 Փրանք
Կանխիկ

ԻՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Անկախ Լրագրութիւն և ագիտ քննադա-
տութիւն—Հայ գործիչք և Հայոց քաղաքակա-
նութիւն — Նամակ Կ. Պոլսէ. Պոլսեցի Հայոց
ազգային քաղաքականութիւնն. — Նամակ Ա.
ղէքսանդրիոյ. Վեֆ. Խրիմեամ Հայրիկ յԱղեք-
սանդրիա. — Ամերիկա մնալ թէ վերադարձալ
Հայրիմիք. — Պատասխան վերի մամակին — Զո-
ռազամ լուրեր :

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան : Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի :

76 E. 9th Փողոց
Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայքէն գրելով : Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր :

ԱՆԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ ՔՆՆԱԴԱՆՈՒԹԻՒՆ

Ազգի մի զարգացման աստիճանին ըս-
տոյդ ցուցիչ է նորա Լրագրութիւնն. Հայ
Լրագրութիւնն ունեցած է իւր մանկա-
կան հիւանդոս և անգիտակից հասակ, յո-
րում քաղաքական թերթն զբաղած էր
չաղակրատելու թեր և դէմ անձնաւորու-
թեանց, չուշելու գովեստ և տիտղոս ի
փոխարէն մուրացածոյ տրոց և ողորմու-
թեանց ոմանց, և յաճախ ևս փողոցային
առակութեամբ տիղմ ու ցեխ նետելու ո-
ղորմողաց հակառակորդներուն :

Այդ դառն ժամանակամիջոց անցած
է, և այժմ դառնաբէն և՛ չըջան սկսած
է Հայ Լրագրութեան համար ի Թուրքիա,
Հայ ցեղին մահու և կենաց խնդիրն կը
յուզուի, ժողովուրդն ի ծփանս է, բան-
տարկութիւնք, առեւանգմունք, կոտո-
րածք, աքսորմունք և մահու պատիժ տե-
ղի կ'ունենան թրքահայոց մէջ, և եւրո-
պեան մամուլն զայդ ամենայն տեղեկագ-
րելով երկար կը խօսի Հայոց մասին, — իսկ
Պօլսոյ Հայ Լրագրութիւնն, որպէս թէ
աւելի օտար և անտարբեր լինէր Հայու
վիճակին քան օտար թերթերն, պապան-
ձեալ կը մնայ թուրք բռնաւոր գրակա-
նութեան յարակախ սրոյն տակ, ձեւանա-
լով անգէտ և անիրազեկ այդ բոլոր դարձ-
նուածոց :

Այս պարագայից մէջ ինչ մեծ դեր
կոչուած է կատարել արտասահմանի Հայ
քաղաքական Լրագրութիւնն իբրեւ Լրա-
բեր և իբրեւ խորհրդատու : Դժուարին
դեր, զի ստոյգ և ոչ չափազանցեալ տե-
ղեկագրութիւններ ստանալ և հաղորդել
պէտք է. և փափուկ դեր, զի շղջամիտ
և հասուն խորհուրդ տալ պարտ է :

Գոհացուցիչ է տեսնել թէ, հակառակ
բազմապիսի դժուարութեանց, Լրագրա-
պետք կը յաջողին կարեւոր թղթակցու-
թիւններ ստանալ Թուրքիոյ այլ և այլ
կողմերէն, որոց մէջ հազիւ երբէք սխալ
և չափազանցութիւն կը սպրդի :

Իսկ խորհուրդ տալու, իրաց և ոգի-
ներու շրջափոխութեան թափանցելով, ա-
մեն ներքին ու արտաքին պայման ի հա-
շիւ առնելով՝ փրկութեան լաւագոյն գիծն

նշանակելու գործն, քան զամենայն փափուկն, ո՞ր աստիճան կարողութեամբ և յաջողութեամբ կը ջնան թերթը կառարել, գայն դժուար է ասել:

Ազգային քաղաքականութեան գիծն ամենայն ճշգրտեամբ նշանակելանհնար է. այդ գիծ իւր ապագայ երկարացման զանազան կետերուն մէջ ի հարկէ և բերմամբ պարագայից պիտի եղանակաւորի: Այս չի նշանակեր՝ սակայն թէ՛ այսօր ըստիպում եմք անորոշ և տարտամ արամադրութիւն ունենալ: Այսօր պատհ հական քաղաքականութեամբ իսկ, պարտաւոր եմք որոշ ուղղութեան մի հետեւիլ: Եւ որպէս զի ուղղութիւնն կարենայ որոշուիլ, հարկ է որ ներկայ կուսակցութեանց կամ գործիչներու պէսպէս ուղղութիւններն քննուին, բաղդատուին, քննադատուին: Եթէ ի մի ընդհանուր ժողովի գայդ անել չէ կարելի, գոնէ լրագրական բեմէն կարող եմք անել:

Ամենուն յայտնի է «ՀԱՅԲԻ» ազատ ընթացքն այս մասին: «ՀԱՅԲԻ» փառասիրութիւնն է ճշմարիտ ազատամիտ թերթի տիպար լինիլ. սպաստամիտ խմբագիրն ոչ միայն հակառակ կարծիքներու թոյլտու է, այլ և հակառակ կարծիքներն երեւան հանելու մասնաւորապէս կ'օգնէ, քանզի ամբողջ ճշմարտութեան տարրերն ընդհանրապէս հակընդդէմ կուսակցութեանց մեջ ցրուած բաժնուած կը լինին: Լաւագոյն գործիչք անգամ կ'ունենան իրենց թիւր կարծիքներն ու սխալ գործեր. գոխալն ցուցներ ջանալ ի լաւագոյն ուղղութիւն գործունէութեան՝ է հարկաւոր և զովելի: «ՀԱՅԲ» խնայած չէ քննադատութիւնն՝ միշտ նշանակելով քննադատելոց լաւ կողմերն ալ և գնահատելի ծառայութիւններն: Եւ զայս անելու մէջ բազում անգամ անհաճոյ դիտողութիւններ լուծ է, ոչ միայն հակառակողներէ այլ և համակրողներէ: Մեզ համակրողներէ ոմանք ցաւ կը յայտեն որ այս ընթացիւք զբազումս կը ցրտացունեմք կամ առիթ հայթայթած կը լինիմք մեզ գէմ թշնամութիւն յարուցանելու: «Ներայր, կ'ասեն, ինչո՞ւ կը դաշխայս ինչ պատուաւոր գործիչին քաղաքականութեան, ինչո՞ւ կը քննադատեն այն ինչ զօրաւոր կուսակցութիւն, միթէ՛ ամեն ինչ որ ճշմարիտ է հրատարակել քո՞ պարտքն է. եթէ կ'ուզես համակրողներդ ու բաժանորդներդ չապցունել, եթէ կ'ու-

զես յաջողիլ, պէտք է որ ընթացքդ փոխես:»

Այսպիսի դիտողութիւնք կը ցուցնեն թէ հանրային բարքերն մեր մէջ դեռ աւելան են: Անձնաւորութեանց դէմ գծուծ խժրժանք և յարձակմունք պժգալի են, բայց կանոնաւոր հակաճառութիւնն և քննադատութիւնն յարգելի և խնդրելի պարտին լինիլ:

Մեք խմբագրի դերն այսպէս կ'ըմբռնեմք և հաստատունիմք ի մտի ըստ մեր ըմբռման կատարել գդերն: Մեր փափաքն է ծառայել հայ դատին ոչ թէ ամենայն հակառակութենէ խոյս տալու և բաժանորդ չապցունելու ջանալ: Կը թըքնեմք այն նիւթական յաջողութեան վերայ որ կեղծաւոր և գծուծ ճարտարութեանց շնորհիւ ձեռք կը բերուի: Եթէ կան ազգին մէջ ազատամիտ անձինք բաւական թուով, ինչպէս կը յուսամք թէ կան, անշուշտ պիտի համակրին ազատամիտ «Հայք»ի և անոր շարունակումն պիտի ապահովեն իրենց նիւթական և բարոյական աջակցութեամբ: Բաժանորդ չապցունելու համար և թերթին ելմտական վիճակն զարգացունելու նպատակաւ բուն ազգային նպատակն զոհել մեր գործ չէ. մեք պիտի ընտրէինք որդ լինիլ և սողալ քան այդ պիտի խմբագիր:

առթիւ

1794 ՀԱՐԻԻՐՍՄԵԱՅ 1894

ՅՈՒՆԵՆԻ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԼՐԱԳՐՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ 1894 ՍԵՊՏ. 1ԻՆ

Մեծ միածալ դիրքով լուսատիպ պատկեր մը, տպուած 70x45 ունդիմետր քարտոնի վրայ այլև այլ բնագրով, մեջտեղն Հայ լրագրութեան հիմնադրին պատկերն, և բոլորտիքն 1894ին Հայերէն լեզուաւ հրատարակուող բոլոր լրագիրները, իրենց խմբագրապետներու պատկերներով: Պատկերն կարելի է ստանալ բաժանորդագրութեամբ, գինն է 50սէնթ կամ երկու ֆրանք ու կէս: Պէտք գիմել ուղղակի առ խմբագրութիւն ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ լըրագրի,

Ի վանս միթարեան

ՎԻԵՆՆԱ, ԱԽՍՏՐԻԱ

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՔ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Մեր նախորդ թուով երկու գործիչներու քաղաքական տեսութիւններն համառօտիւ ներկայացուցինք ընթերցողաց: Մին, Մինաս Զերազ, ՅՂ յօդուածին կը յենու և տէրութեանց դիմելու պէտքն կը շեշտէ, ընդունելով հանդերձ թէ արեւելեան ինքրոյն վերատին ծագման պահուն Հայք բուն ոյժ և ո պէտք է ցուցնեն, միայն թէ այդ բուն ոյժն և ցոյցերն այժմէն գաղա ընկերութեանց միջոցաւ պատրաստել աւելորդ և վտանգաւոր կը համարի: Բաւական է որ ազատական թերթեր Հայոց մէջ զինուորական ոգի մշակեն և ազգային զգացում արծարծեն իրենց հրատարակութեամբ: Միւս գործիչն, Նշան Կարապետեան, իբրեւ սօսիալ-դեմոկրատ (Հնչակեան) կուսակցութեան ներկայացուցիչ, կը պնդէ թէ տէրութեանց դիմել հարկ չէ, այժմէն գաղա ընկերակցութիւն կազմել պարտ է և այժմէն ցոյցեր անել իսկ արժան է. և ցոյցերն բուն Հայաստանի մէջ և Հայաստանէն դուրս ուրիշ Հայաշատ գաւառաց մէջ ալ արժան է անել:

Յայտ է թէ այս երկու տեսութիւնք խորապէս կը տարբերին իրարմէ: Տարբերութիւնն քննել կ'արժէ, և մեք կուգամք անել զայդ՝ ազգային քաղաքականութեան լաւագոյն գծին միշտ ի խնդիր:

Բ.

Մեզ կ'երեւի թէ Զերազի կարծիք դիւանագիտական կամ արտաքին գործունէութեան մասին լաւագոյն է, այսինքն թէ տէրութեանց բարեհաճութիւնն անհրաժեշտ լինելով մեր խնդրոյն յաջող լուծման՝ պարտ է աշխատիլ Եւրոպիոյ հանրային կարծիքն յուզել ի նպաստ մեր, և այսպէս ստիպել դաշլիճներն զմեր դատ ձեռք առնելու: Լոնտոնաբնակ գործիչին համախոհ եմք մեք թէ ՅՂ յօդուածն լաւ գործի մ'է մեր ձեռքն, որոյ մեռեալ

տառ մնացած լինելն կրնայ ցուցուիլ այն յարաճուն աղէտից և անողորմ հարստահարութեանց կենդանի դէպքերուն քով որք տեղի կ'ունենան շարունակ: Շատ բանաւոր է նաև որ Հայոց հարստահարութեանց հետ աշխարհի ծանօթացունենք Հայոց անցեալ քաղաքականութեան նըշխարներն և ներկայ ընդունակութեանց ապացոյցներն: Հայոց հարստահարութիւնքն աւելի զայրոյթ կը յարուցանեն եթէ Եւրոպացիք համոզուին թէ այդ ոտնակոխ Հայեր արժանիք և լայն ընդունակութիւններ ունին:

Զերազ կարեւոր գործ մի կատարած կը լինի Հայոց գրականութիւնն ինչպէս և թշուառութիւնն Եւրոպացոց ծանօթացունելով ճառարհօսութեամբ, յօդուածովք և լրագիր հրատարակելով: Ոչ ոք իրաւունք ունի զինքն մեղադրել թէ սուր չառնուր և Հայաստան չերթար. և ոչ ոք մեղադրած ունի զինքն այդ պատճառաւ, և ոչ իսկ սօսիալ-դեմոկրատք, զի ամեն ոք կ'ընդունի աշխատութեան բաժանման սկզբունքն:

Գ.

Գտնք ներքին գործունէութեան մասին Զերազի սկզբունքին և այդ սկզբունքէ աղբերացող կարծեաց և խորհրդոց:

Իւր սկզբունքն է ՀԱՅՈՑ ՓՈՔՐԱՅՈՑՆ ՎՆԱՍՈՎ ՄԵԾԱԳՈՑՆ ՇԱՀ ԲԵՐՆԼ ԱԶԳԻՆ:

Այդ սկզբունքն բանաւորութեան, բարեսիրտութեան, խոհեմութեան կնիք կը կրէ: Ըստ երևութին գովելի այդ բոլորութեան է զոր կը մերժեմք իբրեւ անյարմար մեր ներկիւյ պայմանաց, և իբրեւ մեր դատին վտանգաւոր իւր տրամաբանական հետեւութեամբք: Հասարակ ժամանակաց համար լաւ է այդ սկզբունք, իսկ պատմական այս ահաւոր պահուս՝ յուռի, թուլացուցիչ, չփոթիչ, վասն զի կը պահանջէ որ աւելորդ փնտս և աւելորդ վտանգ բերող միջոցներ ձեռք չառնուին, թէև չէ կարելի ցուցնել թէ զոհողութեանց անհրաժեշտ չափն ինչ է մեր նըպատակին հասնելու համար: Փոքրագոյն փնտսութեան սկզբունքն բնականօրէն կ'առաջնորդէ անբաւական միջոցներու, վարանոտ ընթացքի, երկչոտ գոռաշարութեան և վերջապէս յոյսն խաղաղական հնարքներու վերայ դնելու:

Թէ այսպիսի են սկզբունքին արամա-

բանական հետեւութիւնքն, վկայ ունիմք զնոյն ինքն մեր պատ. պաշտօնակիցն, զԶերազ, որ իւր ճառին մէջ աւելի քան մէկ կարեւոր թելադրութիւններ հանեց փոքրագոյն փնտսու սկզբունքէն:

Օրինակի համար, թելադրեց որ այժմէն յեղափոխական ընկերութիւն չկազմուի, որպէս զի մասնութիւնք տեղի չունենան և նեղութիւնք չպատահին: Պէտք է սպասել և երբ արեւելեան խնդիրն վերստին ձեռք առնուն պետութիւնք, — խնդիր զոր չեն կրնար քանի մի ամսուան միջոցին լուծել կամ փակել — ա՛յն ատեն ընկերութիւն կազմել և ա՛յն ատեն ոտքի ելնել, քանզի այն պահուն եւրոպայի ուշադրութիւն արեւելքով զբաղած լինելով՝ մեր յեղափոխական ընդհարումնք և նեղութիւնք երկար չեն կրնար տեւել, փնտսն քիչ կը լինի և օգուտն մեծ ու արագահաս:

Բայց եթէ խնդիր է թէ արիւն քիչ չկամ շատ կը թափուի, մեծագոյն ևս խնդիր այն է թէ Հայք այդ միջոցին արդեօք կարող կը լինին փութով յեղափոխական բազմաճղի ընկերակցութիւն կազմաւորելու, և թէ արդեօք ոտքի կ'ենեն: Փորձառութիւնն կը ցուցնէ թէ այնպիսի ընկերութիւն կազմաւորել յոյժ զգուշաւոր ուսումնասիրութեամբ և քննութեան մաղերէ անդամցունելն անցունելով կրնայ լինիլ, ինչ որ երկար տարիներու գործ է: Նաև ուրիշ ազգաց և մեր ալ վերջին ազգային փորձերն կը ցուցնեն թէ՝ որպէս զի պատեհ ժամուն ժողովուրդն շարժի, պէտք է որ առաջուց նախապատրաստական շրջաններէ անցած լինի: Եթէ փոքրագոյն փնտսու սկզբամբ ընթանամք, հաւանականն այն է որ ո՛չ կազմաւորում և ո՛չ ապստամբական շարժում լինի Հայաստանի մէջ բազմացեալ պահուն:

Ասոր նման է միւս թելադրութիւնն ալ թէ թող մեր թերթք եռամսալիւրյօդուածներով գինուորական ոգի մշակեն ժողովրդեան մէջ որպէսզի վերջին պահու շարժմանց պատրաստ լինի: Յօդուածներով գինուորական ոգի մշակել աւելի պարզ և անփնտ անխնայ կը լինի քան զինուորական կրթութիւնն. փոքրագոյն փնտսու սկզբունքն է դարձեալ ծնող այդ թելադրութեան: Բայց խնդիրն ա՛յն է թէ գինուորական ոգի մշակել կարելի՞ է խօսքով, յօդուածով. — ո՛չ: Զինուորական ո-

գին գինուորելով միայն կրնայ մշակուիլ: Հայ երիտասարդաց մէջ յարտասահմանի այդ ոգին զարթուցանելու քան զամենայն դիւրամատոյց և ածանադին միջոցն է գինուորական կրթութիւնն, որ իրական պատերազմի դաշդէն դուրս գմարդ իրական պատերազմի պատրաստելու միակ եղանակն է:

Փոքրագոյն փնտսու սկզբունքն է նաև որ նայիլ կուտայ կոյկասու հայ գինուորաց կամ գինուորական կրթութիւն ստացած ռուսահայոց: Նոքա կրնան ի ճգնաժամուն անցնիլ օսմանեան սահմանադրուին և աջակցիլ Հայ ապստամբաց: Կրնան, ա՛յո, բայց և գուցէ չկարենան: Թրքահայ ապստամբաց աջակցիլ կարենալու համար հարկ է որ թրքահայ ապստամբներ գլխունին. և երկրորդ պէտք է սահմանադրույն ռուսական կողմէն արգելք չի գլխունին: Արդ, որքան ալ լաւատես և յուսալից լինիմք, տակաւին չեմք կարող ստոյգ համարիլ զայդ, և մեծ սխալ կը գործեմք եթէ անստոյգն իբրեւ ստոյգ առնումք ի հաշիւ և թերանամք մեր գործունէութեան լիութենէն:

Փոքրագոյն փնտսով մեծագոյն շահ բերելու սկզբունքն այսպէս կը դատապարտուի իւր տրամաբանական հետեւութեամբ: Այդ սկզբունք անբաւական միջոցներ կը թելադրէ և անստոյգ պատահականութիւններու վերայ յոյս դնելու կը միտեցունէ:

Դ

Հայ ցեղին ներկայ պայքարն գոյութեան և չգոյութեան պայքար է. զայդ կ'ընդունի մեր պատ. պաշտօնակից, բայց միջոցներու մասին իւր թելադրութիւնք բնաւ համաձայն և համեմատական չեն իւր այդ ըմբռնման: Երբ ազգ մի մահու և կենաց պայքար մղելու կը կոչուի, նորա մեծ նախազբաղումն այն չի լինիր թէ ինչպէս կրնայ իրկուիլ քիչ փնտսով. այլ թէ իրկութիւնն ինչպէս կրնայ որքան որ կարելի է ոտոյդ գործել: Ֆռանսական ազգին հաշիւն 1871էն ի վեր այն չէ եղած թէ որքան քիչ գոհողութեամբ կըրնայ իւր գոյութեան ու չգոյութեան պատերազմին պատրաստուիլ, այլ սուտա՞նք, զոհած է միլիոններ միլիոններու վերայ ամ ըստ ամէ, և իւր կրթական ու գին-

ուսումնական դրուժխաններն կատարելագործելու համար ճիշդ ու զոհողութիւնն իւր վերջին սահմաններն հասուցած է :

Հայ ժողովուրդն իբր 1000 տարի գերի ու անկազմ կեանք մի թուառաբար ապրած լինելէ յետոյ ահա վերջին պատեհութիւն մի կ'ընծայուի նմա իբրեւ ազգ վերածնելու, և ամեն մարդ կ'ընդունի թէ նորա ազգային վերածնութիւնն յանձնու գծուարին է ի պատճառս արտաքին արգելքներու և ներքի տկարութեան : Հայք բնազդական դիտակցութիւնն այդ դժուարութեան այնքան խորապէս ունէին որ մինչև տասն տարի առաջ փրկութեան յոյսն ցնորական կը թուէր նոցա, և դեռ բազմաց կը թուի այնպիսի : Այս արտակարգ դժուարութիւններ տուեալ լինելով, Հայաստանի վերականգման յոյս այն պայմանաւ միայն կրնամք տածել որ բոլոր Հնարուսր միջոցներ ի գործ դնեմք այն ամենայն ուժերով և գերազոյն ճգամբք որում ընդունակ եմք : Ոչ թէ փոքրագոյն վնասով, այլ ամենայն ստացուածոց և կենաց վնասով յօժար լինիմք յաղթել դժուարութեանց և դիմել դէպ յերացումն մեր ազգային խոտեանին : Պարտիմք զոհողութիւնն մինչև իւր յետին սահմանն հասցունել, զի մեր լայնագոյն չափն, մեր յիմարական անչափութիւնն իսկ հազիւ հազ կը բուէ գործոյն վիթխարի մեծութիւնն : Մեզ համար հարկաւոր քաղաքականութիւնն է մեր գերագոյն ճիշդերն թափել, և գերագոյն ճիշդերն թափել փոքրագոյն վնասու հաշուով չէ կարելի :

Մեր հոգ այն չ'պիտի լինի թէ մի գուցէ աւելորդ նեղութիւն կրեմք, աւելորդ արինւ թափուի, ո՛չ, այլ այն երկիւղով պէտք է դողամք միշտ չիցէ՝ թէ արինի խնայողութեամբ, ունէ խնայողութեամբ անբաւական գտնուիմք դժուարութեանց յաղթելու :

Ազգին փրկութեան համար 100 գիւղ աւելի այրեր է կամ 5000 մարդ աւելի մեռեր է, փոյթ չէ : Եթէ ազգին կէսն կորնչի մնացեալ կէսն ազատելու համար, կ'արժէ :

Իբա՛ց թողումք ուրեմն փոքրագոյն վնասու թիւր և թոյլ սկզբունքն և գործեմք վերջնական յաջողութեան մեծագոյն հաւանականութիւն տալու սկզբամ որ կը պահանջէ յոյս չղմել հազիւ հնարաւոր ոլատահալանութեանց վերայ, այլ խաղաղական և բուռն

բազմակողմանի և առաստիճանային ջանքերով կարելիութիւններն իսկ ստուգութեան վերածել :

Ե

Չերազ բնաւորութեամբ և հայեցողութեամբ, կատարեալ հակապատկերն է սոսեալ-դեմոկրատ գործիչին : Նա յեղափոխութեան կը խորշի, սա՛ կ'ախորժի, նա յեղափոխութեան կամ ոտքի ելնելու հարկն ստիպուած կ'ընդունի, տրամաբանական լինելու համար կ'ընդունի տեսականորէն և սակայն, վերջին վերլուծութեամբ՝ կը մերժէ ի գործնականին : Սա՛ յեղափոխութեան հարկն, ինչ՞ կ'ասեմ, յեղափոխութեանց հարկն կ'ընդունի, առաջիկայ և անդրադոյն ևս յեղափոխութեան մի հարկն : Նա կը հասկցունէ թէ մեզք է ժողովրդի արին թափել ցորչափ գրիչ կարող եմք շարժել . սա՛ կը պնդէ թէ մեզք է տերութեանց բան հասկցունելու համար չունչ հատցունել : Չերազ, արկար արկսեցի զգուշաւոր ուսումնականի և դիւանագիտական սովորութեանց շնորհիւ չափազանց մեղմացեալ, ի մի ծայր կեցած է, իսկ կարապետեան, արդէն համարձակ Ռուսահայու տիպար, սոսիալիստ եռանդուն համոզման շնորհիւ չափազանց ուժգնացեալ ունի յեղափոխական միտումներն և կը կենայ ի միւս ծայր : Երկու գործիչներն ալ յոյժ հետաքրքրական առարկայ են հոգեբանական ուսումնասիրութեան, երկուքին վերայ ևս կարելի է յատկօրէն ցուցնել թէ սրպիսի խորին յարաբերութիւն կայ մարդու զգացողականին և իմացականին միջև, թէ սրբան հզօր իշխանութիւն ունի սիրտն ուղեղին վերայ, բնաւորութիւնն խորհրդոյ վերայ :

Զ

Մի քանի օրինակօք բացատրենք այժմ սոսիալ-դեմոկրատներու միտմանց չափազանցութիւնն :

Ժողովրդեան մէջ «Հնչակեան» կոչուող կուսակցութեան բուն անունն է ՍՈՍԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ : Սոսիալիզմն է նոցա հիմն և բուն նպատակ : Մեք երբ այս վերջերս ունեցանք առիթն որում բաղձալով կը բաղձայինք երկար տեսնէ ի վեր՝ տեսնել անձամբ մեր սոսիալիստներու կարող մէկ ներկայացուցիչն, մեր առաջին

հոգն եղաւ իմանալ թէ սոսիալիզմն իրօք ինչ տեղ կը բռնէ նոցա ոգւոյն մէջ, և իմացանք թէ աւելի խոր և հիմնական տեղ կը բռնէ այն քան մեք կը կարծէինք: Այդ կուսակցութեան հիմնադիր ուսանողներն ամենն ալ համոզուած ընկերավարականներ են, և իբրեւ այնպիսի միջուած են Հայոց մէջ գործելու: Թրքի լծէն ազատուին ազատութիւն չէ, այլ ազատութեան հասնելու պայմաններէն մին է, և բուն ազատութիւնն այն ժամանակ Հայք (ինչպէս և ուրիշ սեւեռներ) պիտի ունենան երբ սոսիալիզմն իրականանայ իւր մէջ: Սոսիալիզմն ճշմարիտ հաւատարմութեան, ճշմարիտ ազատութեան և ճշմարիտ բարեկեցութեան պայման է, և ուստի այդ սոսիալիստ համագումրն և յայտն է գիրքնք ներքինի, ուրեւորող, յառաջ մղող ոյժ, գաղտնիքն: Հետեւապէս իրենց ընկերութեան մէջ պատասխանատու դեր կատարել կամ ճշմարիտ անդամ լինել անոնք միայն կրնան որք սոսիալիստ են համոզմամբ: Այսչափն կ'աւանդէ ոչ թէ գուշակելով կամ ենթադրօրէն, այլ բուն հիմնադիրներէն եղող գործիչին որոշ և ըստակ բացատրութիւններէն առնելով:

Թէ սոսիալիզմի վերայ մեր համագումրն ինչ է, ընթերցողք պիտի կրնան իմանալ ուրիշ յօդուածէ մի զոր այդ նիւթոյ յատկապէս կը նուիրեմք: Աստ, պիտի համառօտիւ ցուցնեմք միայն այն անյարմարութիւն որ կայ սոսիալիզմն այժմէն գործունէութեան ծրագրին հիմ գրեւելու և անդամակցութեան պայման տնելու մէջ:

ԱՌԱՋԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ. — Սոսիալիզմն անդամակցութեան պայման կամ ընկերութեան բուն նպատակ նշանակելով՝ մեր բարեկամք մուտքն արգելած կը լինին ոչ սակաւ անկեղծ հայրենասէր և կարող յեղափոխականաց դէմ որք սոսիալիզմն կը մերժեն, և որովհետեւ կը մերժեն, չեն ուզեր զայն ընդունիլ ձեռնալ: Իրաւ, կը հաւատամք թէ ամենք կը մտնեն ներս գաւանդով սոսիալիզմ առանց քննած և հասկացած լինելու: Ոմանք ալ յոյժ վեր ի վերայ ծանօթութեամբ կը գտնեն զայն ոչ առարկելի, և սոսիալիզմի գուշակ կը գունաւորին: Սակայն այս ամենայն անկանոնութիւնք են որք ընկերութեան ներքին առողջութեան կրնան մի օր վըտանգներ ծնուցանել: Բայց այդ ապագա-

յի վանգներէն զատ այսօր խիստ ինկրուէթիւնն զրկուած կը մնայ ոչ սակաւ լուրջ հայրենասէրներու անդամակցութենէն:

ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ. — Սոսիալիզմն արտաքին օգնութեան ալ դէմ ընկերութեան դռներն գրեթէ կը փակէ: Դիցուք թէ իրենցմէ մէկն կամ իրենց օգնելու բողձացող մէկն օտարականաց միթիւնի մի մէջ խօսի Հայոց վիճակին վերայ և զրոմական օգնութիւն խնդրէ: Բնական է որ օգնել ուզող օտարականք տեղեկութիւն ուզեն թէ դրամն ինչ տնուն ընկերութեան պիտի յանձնուի, և ինչ է ընկերութեան ուղղութիւնն ու նպատակն: Կարծէք թէ նոցա համակրական դժգոհանց վերայ պող ջուր լեցուած չլինիր երբ իմանան թէ սոսիալիզմն իրենց պիտի տրուի դրամն: Պէտք պիտի լինի երկար բացատրութեանց մէջ միւլ սոսիալիզմն նախ ջատագովելու, տեսակն որոշելու, և անոր հեռաւոր նպատակ մի եղած լինելն հասկացունելու, որ ամեն կերպով անպատեհ և անպտուղ ճիգ կը լինի: Այս դժուարութիւններէ խորշելու համար պէտք պիտի լինի բուն անունն չյայտնել կամ ուրիշ անուն տալ, բուն նպատակին ալ չանկարկել, կամ երբ հարցում լինի, խուսափուկ պատասխան տալ անմիջական նպատակին վերայ պնդելով: Միթէ աւելի լաւ չի՞ լինիր որ այնպիսի անուն և գա՛յն անմիջական նպատակ դնեն ծրագրի մէջ զորս օտարներէն գաղտնի պահել հարկ չլինի:

Եթէ ժողովրդային կարծիքն կը գայթակղի սոսիալիզմէն, ո՞րքան աւելի կ'առավարութիւնք: Սխալ է կարծել թէ Եւրոպայի մէջ ընկերավարականներն կը հաւածուին, կը կախուին. բայց սա ստոյգ է թէ ամեն կառավարութիւն հակակիր է ընկերավարականաց: Պետական մարդիկ շատ պատճառ ունին ընկերավարական առաջնորդներն նկատելու իբրեւ վտանգաւոր մարդիկ ընկերային գոյ կարգաց բնական շրջափոխութեան, իբրեւ քաղաքացիներ որք գործաւոր գտներուն ցնորական յոյսեր ներշնչելով նոցա քուէներն կը շահին ու խորհրդարանի մէջ կուսակցապետի դեր կը կատարեն: Ճանաչելով ուրեմն օտար տէրութեանց համակրական միջամտութեան անհրաժեշտութիւնն մեր դատին ի նպաստ, սոսիալուած եմք ընդունիլ թէ շատ դժբաղդ բան և ահագին

անխոհեմութիւնն է սոսիալիսդներու գործունէութեան ասպարէզը և բոյն երեւցունել զՀայաստան ուր իբր թէ սոսիալիզմն իրագործել պիտի աշխատին յեղափոխական այն Հայ գործիչներ որք տէրութեանց աջակցութիւնն կը խնդրեն :

ԵՐՐՐՐՐԴ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ. — Սոսիալիսդ Հայ ընկերակցութիւն մի աւելորդ է մեր ազգին համար, մինչև իսկ եթէ աւելորդ ՀՀամարուի եւրոպական երկիրներու մէջ : Այս առարկութեան պատասխան կը տրուի թէ փնտս չունի սոսիալիսդ առաջնորդներ և ծրագիր ունենալ քանզի Հայաստանի մէջ անկարելի է սոսիալիզմ հաստատել : Դիտել կուտամք այդպիսեաց թէ փնտս յայդմ իսկ է որ այժմէն կը քարոզուի դրութիւն մի որ անգործադերի է մինչև անգամ եթէ Հասկանալի լինէր մեր ժողովրդեան մէջ : Միթէ խոհեմութիւնն է Հայ ժողովրդին տալ այնպիսի դաս մի զոր հասկանալու պէտք չունի իւր ընկերային ներկայ վիճակին մէջ : Մեր սոսիալ-դեմոկրատներն չորս կամ հինգ տետրակ հրատարակած են ցարդ, ամենն ալ սոսիալիզմի վերայ . միթէ աւելի կարեւոր, աւելի օգտակար գրականութիւն մի չէ՞ին կրնար մշակել : Հայաստանի մէջ իրաց վիճակն որքան արագ ալ զարգանայ, տակաւին առ նուազն 50 տարի պէտք է որ սոսիալիզմի դրութիւնն գործնական կարեւորութիւնն առնու, որ առել կը լինի թէ գալու սերնդին ուսումնասիրելու խնդիրն է այդ . ինչո՞ւ ուրեմն ներկայ սերնդին առջեւ դնեմք խնդիր մի որ իրեն չի վերաբերիր և այդ պատճառաւ ալ իրեն անմիջական ուշադրութեան արժանի խնդիրներն դանց լինին :

Սոսիալիսդ անմարսելի այդ գրութեան փոխանակ կրնային նոր դրութեամբ և ժողովրդեան մտքին ու սրտին մօտիկ նիւթերու վերայ հրատարակութիւններ անել, օրինակի համար Հայոց Պատմութեան, Հայաստանի այլ և այլ գաւառաց տեղադրութեան, բնակչաց վարուց ու բարուց, քաջերու շահատակոցութեանց վերայ . նաև օտար ազգաց պատմութիւններէն յարմար դէպքերու, Կարիպալաիի, պուլկար և յայն յեղափոխականաց և այլոց վերայ : Սոսիալիզմ քարոզելուն փնտսն ահա այն է որ այսպիսի կարեւոր նիւթերու տեղն ու ժամանակն կ'առնու :

Սոսիալիզմի փնտսներուն վերայ աւե-

լի չծանրանալով տնցնինք մեր սոսիալ-դեմոկրատներու գործունէութեան սկզբունքին դէմ ուրիշ կարգի դիտողութիւն մ'անելու :

ՉՈՐՐՈՐԴ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ. — Մեր բարեկամ սոսիալիսդք խնդիրն չափազանց լայն և գործունէութեան ասպարէզն անորոշ բռնած են : Արդարեւ թուրքիա մէկ ծայրէն ցմիւսն անկարգ և անբարեկարգ է, պաշտօնեայք ղեղծ են ամենուրեք, և բովանդակ պետութիւնն, գահէն սկսեալ ցյեալին գիւղն, գետն ու անտառն՝ կարգի բերելու, փոխելու, քակելու և շինելու բան կայ : Բայց մեք Հայքս ամեն բան կարգի բերելու ոչ կոչում ունիմք և ոչ ոյժ : Մեք կը բաղձամք որ բոլոր թուրքիա բարեկարգուի, կուգեմք որ երկրին ամեն կողմն գտնուող Հայեր Հայաստանաբուն, բայց արժան է որ որոշ սահման և գործունէութեան պարզ գիծ ունենամք . միայն մեզ Հայոցս ուղղակի վերաբերութիւն ունեցող դէպքերով զբաղիմք, և մեզ եղած անիրաւութեանց դէմ կեդրոնացունեմք մեր ուժեր : Երբ դատաստան լինի, երբ օտարներէն հարցում ուղղուի, պէտք է կարենամք ցուցնել թէ մեզ Հայոցս եղած այս ինչ կամ այն ինչ հարստահարութեան, նախատանաց, ոճրի դէմ ելած եմք, անպատիժ մնացած ոճրագործն, օրէնքն ոտնակոխ անող դատաւորն կամ պաշտօնեայն պատժած եմք : Այս զմեզ արդար և պարզերես կը ներկայացունէ բովանդակ աշխարհի և մինչև անգամ խղճամիտ թրքին . բայց երբ եղեռնագործն թողումք և զթշտատարն սպաննեմք, երբ Հայաստանի մէջ արդար կառավարիչ ունենալու խնդրոյն հետ չփոթեմք օսմանեան գահուն ժառանգութեան վերաբերեալ դէպքեր, յայնժամ մեր դիրք կը տկարանայ և անպայման Համակրութեան չեմք կրնար սպասել ամենուստ :

Միշտ աչքի առաջ ունենալով թէ ինչ կը պահանջեմք, ըստ այնմ ուղղեմք մեր քայլեր : Մեք կը պահանջեմք Հայաստանի համար ինքնօրէն, քրիստոնեայ վարչութիւն : Որն է Հայաստան : Հայաստանի սահմանն յընթացս պատմութեան շատ անգամ այլալած է . մեք այժմ ընդարձակ Հայաստանի մի պահանջ չունիմք, այլ փոքրիկ Հայաստան մի կ'ուզեմք, — Հայաստանի այն մասն ուր Հայեր մեծամասնութիւն կը կազմեն, այսինքն Կարնոյ

և վանայ նահանգներն և Տիգրանակերտ նահանգի հիւսիսային մասն: այսչափն կը բաւէ մեզ. եթէ այսչափն ինքնօրէն լինի, ամեն դրացի նահանգներէ Հայեր պիտի լեցուին հոն և ոտար տարրեր պիտի քաշուին երթան դուրս, և այսպէսով քիչ տարիներ յետոյ պիտի գտնեմք հոն, բազմամարդ գրեթէ զուտ հայաբնակ ճշմարիտ Հայաստան մի որ պիտի կրնայ իւր սահմաններ ի հարկին և ի պատեհ ժամուն ընդարձակել տակաւ: Մեր արդար պահանջման չափն այդ է այժմ: Եւ ուստի լաւ կը լինի որ այդ հայկական սահմանաց մեջ կատարուող հարստահարութեամբք գրադիմք, և վարչական գեղծումներն հրապարակ հանել, ուղղել, պատժել ջանամք. և Եւրոպա ալ շարունակ այն մասերուն մեջ կատարուած դէպքեր լսէ և իմանայ, ոչ թէ Կեսարիոյ, Էնկիւրիի:

Եւրոպա գիտէ թէ թուրքիոյ ամեն կողմն չարիք շատ է, բայց այժմ չէ կարող ընդհանուր դարման տանիլ. և մեք ալ ճիշտ այդ հիման վերայ հաստատուած կը պահանջեմք որ Հայաստանի համար դարման լինի նախ, քանզի Հայաստան աւելի քան ուրիշ գաւառներ կը հարստահարուի և աւելի քան ուրիշ գաւառներ Հայ ունի և ինքնօրինութեամբ բարեկարգուելու յարմարութիւն և իրաւունք:

Թէև կարելի էր դեռ շատ աւելի քննադատել թէ զԶեռազ և թէ զսոսիալ-դիմոկրատ կուսակցութիւնն, բայց մեք այս մի քանի դիտողութեամբք վերջ կու տամք:

Եզրակացութիւնն յայտնի է. Զեռազ ի խորս հոգւոյն պահպանողական է, չափազանց խոհեմութեամբ կը վախէ վնասէ, յեղափոխութենէ. սոսիալ-դեմոկրատներ վախ չունին, ինչ որ յոյժ պատուական և յոյժ գովելի է, բայց խոհեմութենէ ալ կը թերանան:

Այդ երկու տեսակ գործիչներն ի մօտոյ տեսնելով և լսելով աւելի քան երբէք համոզուեցանք թէ ծայրայեղ և հակադիր բնաւորութեամբ գործիչներ ի մի մարմին միացած կարող են զիրար քաշել բերել ի միջոտահամակութիւն և ի լաւագոյն գիծ գործունէութեան:

ՆՇԱՄԵԿ Կ. ՊՈԼՍԷՆ

ՊՈԼՍԵՅԻ ՀԱՅՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՆ

Մեծարգոյ Տէր և խմբագիր «ՀԱՅՔ» ազգային թերթի,

Ձեր նամակը սիրաւ ի տրուի կարդացի և պատասխանելու ատենս ալ սիրտ իցաւ կը շարժեմ գրիչս: Դուք կը փափաքիք մեր Պոլսեցւոց, ոչգաւառացի պանդուխտներու, ազգային գաղափարներն, քաղաքական կարծիքն «յստակ կերպով» ներկայացուած տեսնել. իմ առաջին պատասխանս այս է թէ «յստակ կերպով» չեմ կրնար ներկայացունել զայն վասն զի յըստակ և որոշ և հաստատուն չէ այն: Մի քանի բացառութիւններն թողլով, կրնամ առանց չափազանցելու ըսել թէ դէպքերու ընթացքին հետ մերոց գաղափարներն ել և էջ կ'ընեն, կը խաղան առաջ և ետ: Երբեմն միջին... յեղափոխականն կարմիր գոյն կ'առնու, և խաղաղականն ալ կը միտի յեղափոխականութեան: Երբ Հարստահարութեանց արտասովոր դէպքեր և արհաւիրք կը գործուին, այն ատեն ոմանք կը բարկանան անիրաւ կառավարութեան դէմ և վայրկեան մը գոնէ կը քրթնջեն թէ ապստամբութիւնն արդար է և յեղափոխութիւնն իրաւ. և աւելի շատեր ալ կը մրմռան սարսափած թէ ահա ցնորեալ երիտասարդ գաւառացիներու յիմարական շարժումներուն դառն պտուղը, ինչպէս որ իրենք արդէն հեռատեսութեամբ կը նախագուշակէին. գործերն արդէն գէշ, աւելի կը գիշանան, կառավարութիւնն խիստ, աւելի կը խտանայ. մեղաւորներն արդէն հալածեալ, անմեղ խաղաղասէրներն ալ կասկածի և վշտաց կ'ենթարկուին, և չարիք ի չարիս կը բարդուին, աւա՛ղ, բարէ՛, ո՛հ, ա՛հ, եղո՛ւկ, ինչ պիտի ըլլայ այս ամենուն վերջը...:

Պոլսեցւոց մէջ սաստիկ յեղափոխական կարծուած մի քանիներ ալ քաջալերիչ և ոգեւորող ազդեցութեանց տակ պահպանողական սահմանադրութիւն հեռացած են բայց պահ մը թափառելէ և դժուարութեանց լախելէ վերջ ինկած են դարձեալ պահպանողականաց կարգերուն մէջ:

Երբ Պոլսեցի մը յեղափոխական կար-

ծուր, դիտանալու էք թէ նա յեղափոխականաց թողալու է, անհաշտ և թշնամի աչքով չի նայիր, բայց ինքն անձամբ յեղափոխութեան գործերու մասնակցիլ չի համարձակիր: Զիչդն ըսելով յեղափոխական չէ, բայց յեղափոխութեան պէտքը կ'ընդունի, կը բաղձայ որ յաջող յեղափոխականներ գտնուին, բայց ինքը յեղափոխիչ չի դառնար: Մինչ իսկ իւր տեսական յեղափոխութիւնն յաճախ իւր հոգւոյն մէջ զաղտնի կը պահէ չփոթ բառերու վարագործին տակ:

Այսպիսի է ահա Պոլսեցի կրակոտ յեղափոխականը, և ան ալ շատ հաղու ագիտ: Եթէ խօսքով յեղափոխութիւն կ'ըլլայ, նա խօսքով կ'ուտայ ծով մը արիւն և 10 միլիոն լիրա:

Նուազ կրակոտներն և աւելի խոհեմներն կան, որոնք աւելի շատուր են քան վերոյիշեալ բառաւոր յեղափոխականներն: Ազգասէր և յաճախ փառաւոր մարդիկ, թուրքիոյ և Եւրոպիոյ վիճակն հասկացող և մտածող մարդիկ, որոնք կ'ընդունին թէ դարման մը ըլլալու է, և դարման մը ըլլալու համար պէտք է խնդրել դարման: Որմէ՞ խնդրել: Հոտ ալ կարծիքներն կը տարբերին ահա: Ըստ ոմանց յարմարագէտ պատեհութեամբ կրնայ խնդրուիլ Սուլթանէն, Պատրիարքին միջոցաւ: Ըստ ոմանց կրնայ ի դէպ ժամու խնդրուիլ եւրոպական դեսպաններէն ալ: Սրբազան պատրիարք Աշըգեան յայտնի ներկայացուցիչն է այս դատու մարդոց: Միայն թէ իւր աթոռին ազդեցութենէն կը թուի թէ երբէք չտեսներ դեսպանաց դիմելու պատեհ ժամ: Այդ կարգին վերաբերեալ ուրիշ ո և է անձ ալ, եթէ պատրիարքը ըլլար, նոյնպէս դժուար պիտի համարէր, անխոհական պիտի կարծէր դեսպանաց դիմել, վասն զի կառավարութիւնն կըրնար իմանալ և ցաւիլ և ատկէ յառաջ կուգար Դրան խոտութիւն:

Պատրիարքական գահն ազգասիրական գործունէութեան վրայ այսպիսի զսպողական ազդեցութիւն ունի, որդար և օրինաւոր միջոցներէն ալ քիչ մը զեղջիլ կուտայ: Սուլթանէն անգամ գթութիւն խնդրելն սակաւ ձանձրացուցիչ բան կը դառնայ և հետևապէս փնտարելու և խորշելի:

Ընդհակառակն Աշըգեան պատրիարք չայրն կամ անոր նման ազգասէր մը ար-

տասահմանի ազատ հոգին վրայ ապրելու լինէր, իւր գործունէութեան վրայ ճշուամբանեցունող ազդեցութիւններէն կ'ազատէր և բնականապէս դեսպանաց կամ մանաւանդ անոնց աշխատեանց դաշխիճներուն տը կը դիմէր համարձակ: Իւր յանդգնութեան վերջին սահմանն այսպէս հասած կ'ըլլար: Բայց յեղափոխութիւն գործելու, արիւն թափելու, ոտքի ելնալու ջատագով և հետամուտ եղողներուն միշտ պիտի նայէր առաւել կամ նուազ արհամարհանօք կամ ցաւով, վասն զի պիտի պնդէր հաւատալ միշտ թէ աշխատեանց միջամտութիւնն է մեր ազատութեան համար հարկաւոր եղած բան, զոր համբերութեամբ և յարատեւութեամբ խնդրելով կրնանք ստանալ վերջապէս, ինչ հարկ կայ թուրք խուժանն և թուրք կառավարութիւնն կատարեցունել մեր տըկար և ծաղրելի ուժով ոտքի ելնելու յանդգնելով: Եւրոպացիք մեր վիճակն ու պահանջն կը ճանաչեն, և աւելի ալ հասկանալու ետեւէ են, մեզի եղած դաշնադրական խոտաւմն ուշ կամ կանուխ պիտի կատարեն, ասոր վրայ խօսինք, պնդենք, հրաաւարակութիւններ ընենք և այսպէս խաղաղ միջոցով և առանց աւելորդ չարիք մեր ժողովրդին վրայ բերելու կը փրկենք զայն:

Ահա, Ազգասէր Տէր, ըստ իմ տեսութեան Պոլսեցի ազգասէրներու քաղաքական հայեցողութիւններն և զանազան ու դիւրափոփոխ գոյներն: Ինչ որ ըսի, համառօտիւ ըսի, և կուտամ զայն իբրեւ իմ անձնական դիտողութեան արդիւնք: Կրնամ սխալ տեսած և հասկցած ըլլալ մի քանի փոփոխութիւններ միջանի հնարաւոր եղանակաւորումներ, բայց կարծեմ թէ կարծիքներս ընդհանուր առմամբ հիմնուոր են:

Ընդունեցէք, սիրելի խմբագիր, իմ յարգանաց անկեղծ հաւաստիքը:

ԲՈՅԼ

Հայ պատրիարքարանի դիրքն անփոփոխ կը մնայ: Սուլթանն դեռ կը մերժէ Պատրիարքի հրաժարականն, որ թողալութիւն խնդրած և ստացած է Նորին Վեհափառութենէն երթալ ի Եւլոփա, ջերմուկներն: Գալ երեքշաբթի պիտի մեկնի:

ԹԱՅՄՁ

ՆԱԽԱԿ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԷ

ՎԵՇ՝ ԽՐԻՄԵՆԸ ՀԱՅՐԻԿ
ՅՈՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԷ

Աղեքսանդրիա 26 Օգոստ. 1893

Օգոստ. 19ի տառաւորուն կը սպասուէր Հայրապետն յԱղեքսանդրիա, ուր Գահիրէէն ևս աղբայինք գունդագունդ իջած էին երթալու ընդ առաջ: Միջօրէին ժամ մի առաջ վեհափառն ստը կը դնէր նաւամատոյցին վրայ: Խորին լուսթիւն կը տիրէր ժողովրդին մէջ վեհ պահուն, և Նորին Օծութիւնն, վեղար ի գլուխ, պարթեական ծանրութեամբ մը սկսաւ յաջ և յահեակ ողջունել եգիպտահայ գաւազունքն: Անշուշտ գլխիւրաց և պատկառուստ կ'ընդունէին ամենեքեան Հայրապետի ողջուններն: Վեհափառն բազմեցաւ իջեղ կառու և հեծելազօրաց փոքր ջոկատի մի ընկերակցութեամբ առաջնորդուեցաւ դէպ յեկեղեցի: Հետեւող կառքերու շարքն անպրաւ էր, այնպէս որ նաւամատոյցէն մինչև եկեղեցին երկարող իբր երեք քառորդ ժամու ճանապարհն փակուած էր սովորական անցորդներու առջև:

Երբ շուն հասաւ եկեղեցւոյ դռն առջև, հոն եպիսկոպոսք, արեղայք և քահանայք զգեստաւորեալ սկսան յառաջանալ յամրաքայլ. և վեհափառն չորս աշխարհականներէ բռնուած սոկեծով սովահովանոցի մը ներքեւէն ծանրընթաց կը հետեւէր հանդիսագեղ թափօրին: Սպիտակագլուստ քսանի չափ սանուհիներ, երկու զոդահեռական գիծերու վրայ ընթանալով ճանապարհին վրայ մերթ ընդ մերթ ծաղիկ կը տեղային, մինչդեռ երգեցիկ մանկունք հագեթունտ շարականներ կը գեղգեղէին: Դպրաց դասուն կը հետեւէր մեր առաջնորդ Հայրն իւր քահանաներով, և ապա արեղայք և եպիսկոպոսունք և հոսկ ուրեմն ամենայն Հայոց Հայրապետն: Այս միջոցին Հայ ժողովրդեան և օտարազգեաց թիւն հազաներու հասած էր: Եկեղեցին կուտակեալ բազմութեան տակ կը հեւար կարծես, և դեռ դուրսն ալ քառապատիկ ամբօխ մը կը մնայր: Հայրիկ, աւարտելէ յետոյ իւր

հակիրճ մաղթանքն, դարձաւ և ժողովրդեան խօսեցաւ քառորդ ժամու մը չափ: Սիռնէն ողջոյն և Արարատէն խոստում...

Օրհնեց զժողովուրդն, և փոխարքայն եգիպտոսի, գիտսիոյ ամենաողորմած ինքնակալն, և երբ վերջ եղաւ իւր մաղիչ ոգեւորիչ բարեբառին, տնկաւ յուղի դէպ առաջնորդարան, և ահա հազարաւոր բերաններ սրտաթունդ գոչեցին երիցս «ԿԵՑՑԷ՛ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿ»:

Նոյն և յաջորդ երկու գիշերներն լուսավառութիւնք և խրախճանութիւնք կատարուեցան եկեղեցւոյ բուրաստանին մէջ: Ընթրիքի տանն բաժակահաւեր, ուղեքներ արտասանուեցան, նուագածութիւնք եղան, և ժողովուրդն ալ զՀայրիկ յարտասուս փղծկելու չափ մեղամաղձութեամբ մը հայրենեաց ժամանակակից դէպքերէն քաղուած սրտայոյզ երգեր երգեց...: Հոս երիտասարդաց խումբ մը օրիորդի մ'ը ատենախօսութիւնն կը լսէր, հոն ուրիշ խումբ մը վեհափառին ձօնեալ երգերով հանդիսավայրն կ'ողբերէր և ժողովրդեան ցնծալիւ խանդավառութիւնն աննկարագրելի ատիճանի հասած էր:

Ժողովուրդն խուռնամբօխ բազմութեամբ և անպատում եռանդեամբ երեքշաբթի երեկոյեան ժամ 5ին ուղեկցելով մինչև ցնաւամատոյցն՝ բարի ճանապարհ մաղթեց Նմին Օծութեան, որ յուզեալ սրտիւ վերջին անգամ մ'ալ օրհնեց ու ողջունեց իւր եգիպտահայ հօտն և մեկնեցաւ դէպ ի վսեմն Այրարատ:

* * *

ԱՄԵՐԻԿԱՅ ՄԵԱՂ ԹԷՎԵՐԱԴԱՌՆԱԼ
ՀԱՅՐԵՆԻՔ

Թէնիֆլայ Սեպտ. 2 1893

Մեծայարգ խմբագիր «Հայք» լրագրոյն, Աղբային մի յոյժ կարեւոր խնդրոյ վերայ անհամաձայն եմք: Թոյլ տուէ՛ք որ անգամ մ'ևս քննեմ այն խնդիր թէ պէտք է «մնա՞լ յօտարութեան թէ վերադառնալ հայրենիք»:

Բարեբաղդ դիպողութեամբ ըստ ամենայնի համաձայն եմք խնդրոյն վախճանին կամ նպատակին վերաբերմամբ, ձեռնարկութեան ձևն լինելով յոյժ պարզ և յստակ. Հայ ազգն այժմեան պատմական

վիճակէն բարձրացնելի կարգ քաղաքական ազգաց: Մեք գիտեմք այժմ թէ ի՞նչ կը խնդրեմք, բայց չեմք համաձայնած թէ ի՞նչ պէտք: Փորձերն ստուգեցին որ դիւանագիտական պաղարիւն եղանակն բաւական չէ այդպիսի վիթխարի ձեռնարկութեան երականացման, հարկ է որ արդի և իրական միջոցք ազդու գործունէութեան բերունին որպէս զի դիւանագիտութիւնն ունիցի պատճառ գոյութեան: Դրական միջոցներն են հուր և սուր, որ կը պահանջէ դրամ և ցինուր. ո՞վ պիտի հայթայթէ զայդոսիկ: Նոյն իսկ ազգային մարմինն որոյ շահերն են ի ներքոյ խնդրոյն:

Ուր պիտի հաստատէ այդ մարմին իւր գործողութեան գլխաւոր կեդրոնավայրն: Ի Ռուսիայ և ի միացեալ նահանգս Ամերիկոյ:

Ինչպէս գոյ յԱրեւելս մի Ռուսահայ մարմին կազմ և պատրատ, հարկ է գոյանալ նոյնպէս մի գորաւոր Ամերիկեան— Հայ մարմին, յԱրեւմուտս:

Թուրքիոյ սահմաններէ դուրս, քաղաքականացեալ ազգաց միջև մնալուն հարկ և օգտակարութիւնն մերժել, ուրանալ է միջավայրի ազդեցութիւնն որ կ'ազնուացնէ զցեղ ինչպէս կարէ նուաստացնել գեղեցկագոյնս իյատկութեանց:

Միթէ այն գերապանծ ծառայութիւն առ Հայ պատմութիւն և գրականութիւն զորս կատարեցին վերապառուելի Հորք ի Վենետիկ և Վիէննա, կատարելի՞ էին Թրքական մթնոլորտի մէջ:

Միթէ կամաւորաց այն քաջակորով գունդերն որ կը շահատակէին յաջ և յահեակ վերջին Թուրքո-ռուսական պատերազմին ատեն, շահատակութիւնք որ նոյն իսկ Ռուս գորավարք չ'կարէին ըստ բաւականին զմայլիլ ընդ արութիւնս և ընդ զինուորական կարգապահութիւն այդ քաջաց բանակին. որովհետեւ բարբառիլ տունին զմին ի բարձրագոյն զինուորական պաշտօնավարաց Ռուսիոյ (Ժէնէրալ բրէնս Միրաքի սրբան կը յիշեմ) յառաջ բերելով նա նշանաւոր բաղդատութիւնն: Ինչ՞ տարբերութիւն Հայ և պուլղար կամաւորաց միջև, առաջինքն պատիւ բերին մեր դրօշակին մինչ վերջինքն որոց համար մեր արիւն կը թափեմք, անպատուեցին սիկարեան ասպատակութեամբ: Հնար՞ էր կը հարցնեմ, այսքան գովութեան արժանանալ ի սահմանս Թուրքիոյ:

Բայց որովհետեւ ցեղն նոյն է և նոյնպէս ընդունակ ընկերական բարձր կոչմանց, լաւագոյն չէ՞ Հայոց համար որ միանայս երկրին մէջ և բեղմնաւորին. ուր փոխանակ համարուելոյ մի կարգ ժողովուրդ աղքատ և անգէտ որ երկրին առատածեռութենէն ժամանակաւոր օգուտ կը քաղէ թափառիկ կեանք վարող վրանաբնակ գնչուներու նման, հաստատուն թափանորդ և ժառանգ գրուն երկրին ճոխութեան, գործօն և ազդեցիկ:

Թերեւս զայ ժամանակ որ Ամերիկեան Հայք ևս պարտաւորին իջանել յասպարէզ հրոյ և սրոյ ի պաշտպանութիւն երկրին փառաց և իրաւանցն որ ասպնջանական եղև իւրեանց թշուառութեան առաջին տարիներս մէջ, որոյ օրինակն տուած են, և կուտան մեր Ռուսահայ եղբարք: Հայ գաղթականութեան շարժումն դէպ յԱմերիկայ որ չ'է նախատեսեալ մի արդիւնք հաստատեալ կարգի կամ սահմանեալ դրամազլխոյ, և ոչ իսկ կը պարտի նախածեռութեան միոյ ուրուք ի փութեռանդ հայրենասիրաց մերումն ժամանակի, արժանի է յաւէտ մեծարանաց և ակնածութեան քան ցաւալի անտարբերութեան: Երբ յիշեմք Մայրն մեր Հայրենի, մերկացեալ ի փառաց և անշքացեալ ի զարդուց, որ անցելոյն յիշատակաւ կը ճենճերի. տաղտկացեալ այլ ևս իւր այլասերեալ յոգիս ապաստան որդւոցն եղիկի տեսարանէն, իւր բոլորտիքն սապաստ յերկիր. աչքերն սեւեռեալ ընդ հորիզոն՝ վերականգնումն կը յուսայ իւր ասրակայ որդւոց բարձրացեալ ճակտէն և արիացեալ բազկէն, ո՞չ դուք, Մեծարգոյ, խմբագիր, և ո՞չ ես, պիտի կամիմք յորդորել, ջնջել այդ վերջին ակնկալութեան նշոյն, կամ յափշտակել նաւաբեկութենէ մնացորդ այդ վերջին փրկութեան տախտակն, բաւական է մեզ բարեռք սեղեկանալ թէ ուր է այդ ակնկալութեան նշոյն, ուր է այդ փրկութեան տախտակն:

Ժամանակի գօրութիւնն ի նկատ առնուն որ միշտ դժնդակ եղած է ժողովրդոց, որք չեն ուսած յաջող կամ ան յաջող ելից պատմութիւնն գրելի առնել այդ գօրութեան գերագոյն իշխողութեան, անհամբեր աճապարանօք կորուսած են միշտ գեղեցիկ առիթներ: Թէ Ամերիկեան Հայ մարմնոյ կազմութիւնն որ իւր գաղափարական շրջանն կը կատա-

րէ այժմ, ինչպէս էր Ռուսականն երեք քառորդ դար առաջ, իրականութեան ձևն պիտի ընդունի վերջապէս, գուշակելի է իրաց ընթացքէն այդ երկու բազկաց ընդհարումէն որոտացող ձայնն պիտի հնչէ ապագայ ժամանակաց մէջ, զարթուցանելով յարութիւն և կեանք:

Հաճեցեկ ընդունիլ

Մեծարգոյ խմբագիր,

Ողջոյնքն բարեկամիդ

Մ. Վ. Պէճկի՜ճի

Պատասխան վերի նամակին

Ի գէպ է որ պանտիտութեան վերայ յաճախ խօսուի: Պանտիտութեան խնդիրն հայու խնդիրներէն է դժբաղդարար:

Օտար երկիր երթալն մերայնոց բոլորովին արգելուլ չէ կարելի, քանզի հարկ կայ, նիւթական անդրամաքելի ստիպողականութիւն կայ նոցա մէկ մասին պանտիտեւուն ի խնդիր դրամոյ, և այս հարկն անտի առաջ կուգայ որ թէ և երկիրն ցանցառ բնակեալ է, գործելու առաջարկէն նեղ կուգայ բնկաչաց, զի բաւական երկրագործական, արհեստագործական և վաճառականային շարժում չիկայ: Նկատելով այս դառն կացութիւն երկրին, ցնորամիտ պահանջոտութիւն կը լինի պնդել որ Հայեր բոլոր միան իրենց հայրենի հողայն վերայ:

Պանտիտութեան հարկն այսօր ալ հզօր է, և ունի իւր լաւ ու յոռի կողմեր: Եթէ պանտիտութեան հոսանքն իմաստուն ուղղութեան հպատակեցունել կարելի լինէր, հնար էր չարիքն նուազագունի իջեցունել և բարիքն առաւելագունի: Ոչ նուազ քան 80 հազար պանդուխտ Հայեր կան ի Պոլիս ալ և ալ գաւառներէ եկած, դոքա առանց ընտանեաց են և յոյժ աննշան շահ կ'ունենան իբրեւ պտուղ դառն քրտանց. այդ պանդխտոց մեջէն եթէ կարելի լինէր հոսանք մի յառաջ բերել դէպ Ամերիկա, այնպէս որ 50 հազարն գալին Միացեալ Նահանգաց մէջ դրամ չահել, կը հաւատամք թէ լաւագոյն թուակ կ'առնուին և լաւագոյն երկրի մէջ կ'աշխատէին, օգտելով փոքր ի շատ բարոյապէս ևս: Բայց թէպէտ սյապիսի բաղձանքներու մէջ չաա առաջ երթալ և

գեղեցիկ ենթադրութիւններ իրարու ետեւէ շարել դիւրին է, յաճախ անգործնական է և սպանիական դղեակներ յօդս կառուցանելու կը նմանի: Նախ որ Պոլսէն հոսանք մի հանել ունի դժուարութիւններ, և ապա վախ ալ կայ որ սերիչներ գան գաւառներէն նոցա աեղ ընուն և Հայաստանէն ելնող հոսանքն աճի: Կէտք է չ'մոռնալ այն կարեւոր իրողութիւնն թէ Ամերիկա ցարդ եկող Հայերուն 100 ին 98ն գաւառներէն ուղղակի եկած են և ոչ թէ պոլսոյ մէջ արդէն պանդուխտ եղողներէն:

Հայաստանէն պանդխտական հոսանքն աճեցունել դէպ ի Պոլիս և գէպ յօտար երկիրս՝ ըստ մեզ ահաւոր սխալ է, մեր դատին յոյժ փնտաւար կըլինի անմիջապէս և վերջապէս: Գոհացուցիչ կը լինէր եթէ արդէն ընթացող անհրաժեշտ հոսանքն դիմէր դէպ ի Միացեալ Նահանգս և մանաւանդ եթէ պոլսոյ պանտիտութեան կողմուէր մեծ մասամբ: Եթէ այդ կերպով Ամրիկայի Հայոց թիւն մեծապէս աճելով 50 կամ 70 հազարի հասնէր, կ'ունենար մեծ օգտակարութիւն: Բայց մի պայման կայ սրոյ վերայ հաստատապէս կը պնդեմք, թէ մինչև իսկ Ամերիկայի Հայ պանդխտներ պէտք է երեք կամ առաւելն հինգ տարի միայն միան հոս, պարտին գոհ լինիլ այնքանով զոր կրնան շահիլ այդ ժամանակամիջոցին, և վերագառնան ի Հայաստան: Ինչ օրհնեալ բան կը լինէր եթէ տաւն տարուան մեջ այդպիսի երթևեկութեան շնորհիւ ամերիկեան քաղաքացի եղած 20-30 Հայեր գտնուէին ի հայաբնակ գաւառս...:

Ուրիշ անգամ բացատրած եմք թէ զի՛ հինգ տարին վերջին ռահման կը դնեմք ամերիկեան պանդխտութեան քանզի այդ առաջին տարիներուն մէջ պանտիտան կ'օգտի, գաղափարով և նիւթապէս կը շահի փոքր ի շատէ, իսկ այնուհետև վտանգներ աւելի կը սպառնան իւր առողջութեան, իւր բարոյականին, իւր հայութեան անգամ, և մանաւանդ մանաւանդ առանց ընտանիքի կեանք վարելով չի կրնար զարգանալ ալ ևս, և Հայ ազգին թրւական ոյժն ողբալի կերպիւ կը նուաղի:

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոնի Նիոի Րիվի ռամսթերթին 51-րդ թիւին մէջ Անգլահայկական ընկերակցութեան Նախագահ Ֆ. Ս. Սթիվընսընի մէկ յօդուածն կայ «Հայ Եկեղեցին և տնոր եղած անիրաւութիւնք» խորագրով, որ Հայոց վերայ կը խօսի:

Անգլահայկական Ընկ. խնդրած լիւնելով Լորտ Րոզպէրիէ որ Հայ բանտարկելոց վերաբերութեամբ կատարուած դիւանագիտական թղթակցութիւններն հրատարակութեան տայ, նախարարն պատասխանած է թէ Հայոց դատին օգտակար չհամարիր այդ հրատարակութիւնն անել:

Վիէնայէն կը հեռագրեն Տէյլի Նիւզին «Նորընտիր Կաթողիկոսն, Հայ Եկեղեցւոյ Հայրապետն, Հոսաւ շարաթ օրն ի Թրիէսթ (Օր. 26ին) Աղէքսանդրիայէն, և պիտի շարունակէ իւր ուղեւորութիւն դէպ ի Վիէննա: Երկու արքեպիսկոպոս կ'ընկերին Հայրիկին: Թրիէսթի մէջ ռուսաց ընդհանուր հիւպատոսն և Հայեր ընդունեցին զնա: Կաթողիկոսն պիտի երթայ յՕտէստա և Թերեսա նաև Մոսկուա, խնդրել Չարին գթութիւնն թուրքիոյ և Պարսկաստանի Հայոց համար:»

Նոյն թերթին կը հեռագրեն Կ. Պոլսէն թէ Վտնի մօտ սպաննուած չորս Հայերու մասին քննութիւն կատարուած և ցուցուած է թէ ոչ Քրդեր, այլ Քրդու տարազով ծպտեալ Հայեր են ոճրագործներն, որոց անուանքն ալ գտնուած են, և միջոց կը գործածուի զիրենք դատի բերելու:

5 Սեպտ. 93. Րէյսին, Ուիս.

Տէր

Քաղաքիս մէջ յիսուն Հայեր կան, որոնք երկաթի գործարաններու մէջ կ'աշխատէին: Սակայն ինքրկայիս որպէս ընդհանուր երկրում նոյնպէս և տեղւոյս գործոց դադարման պատճառաւ, վերոյիշեալներէն տասն անձինք միայն գործ ունին, մնացեալք անգործ են: Այս վերջնոց ողորմելի վիճակ և միայնգամայն իրենց անդադար առ իս դիմումներ, ինծի թեւադրեցին դիմել ձեզ և խնդրել մեզ իմացունել ձեր ազգօգուտ թերթիւ տեղ մի ուր՝ այդ անձինք պիտի կարենան գործ ունենալ

եթէ երբէք կայ: Եւ եթէ յարմար դատէք, հաճեցէք այս անձանց արդի վիճակ հրատարակել Հայքի միջոցաւ, առ ի գիտութիւն մեր ազգայնոց: Որով մեր Հայ եղբայրք տեղեկանալով իրենց եղբարց այս յուսակտուր կացութեան, ջանան օգնութեան ձեռք կարկառել:

Գահիրէի ԲիՌկոնէ անուն Փռանսերէն թերթն մասնաւոր շնորհակալեաց արժանի է այն խմբագրականներուն համար որովք Վեհ. Խրիմեան Հայրիկի կենսագրութիւնն և Հայոց մասին այլ համակրաշարժ ծանօթութիւններ տուած է Հայրապետին յԱղեքստրիա գտնուած օրերն:

THE ANGLO-ARMENIAN GAZETTE

ԱՆԳԼԻԻ ՀԱՅԿԱՍՆ ԿԱԶԷՏ

3, Plowden Buildings

LONDON, E. C

Վերոյիշեալ թերթի առաջին թիւն գոթութեամբ ստացանք և կը մալթեմք լիւնլի յաջողութիւն:

Թերթն զուտ անգլիերէն է, ուր երեսներէ բաղկացեալ, և կը հրատարակուի ամիսն անգամ մի: Տարեկան բաժնեգինն է 5 շիլլին:

Ընթերցողք գիտեն թէ զուտ անգլիերէն ամսաթերթ մ'ալ ԱՐԱ մեր Հընդկահայ ազգայինք կը հրատարակեն տարիէ մ'ի վեր, նոյնպէս բոլորովին զուտ հայկական պարունակութեամբ:

Այս թերթերն Ամերիկայի Հայոց և բուն ամերիկացւոց մէջ տարածել արժան է յօգուտ հայ դատին:

MORRISON & Co.

88 Fulton Street

New York

ՄՕՐԻՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՐՊԵՏ ԴԵՐՉԱԿ

Կը շինին պատուական ձեռք մի ըզգեստ 20 տալերով, օվըրթ 20 տալերով և փանթալոն 5 տալերով:

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE.

NEW YORK

27-ր և 28-ր փողոցաց միջև

Պատիւ ունիմք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ առանց քարի, և միամե-
զամայն մաքուր ու ըմտիր պուլիտը կը վաճա-
ռենք, փառւնտը 8 սէնթի միայն, փութով հը-
րամաններն կը կատարուին միայն ամսոց
որք կամելիկ կը վճարեն:

Նիւ Եորքի եւ Ճէրզիի Հայերն եթէ 25
փառւնտէ աւելի գնելու լինին փոխադրութեան
ծախքը մենք յամծի կառնուրք վճարել: Իսկ
ուրիշ քաղաքաց մեր յաճախորդներն առնու-
ազն 50 փառւնտ գնելու եմ փոխադրութեան
ծախքէ ազատ մնալու համար:

Փորձեցէք մեզ և զո՞ն պիտի ըլլաք:

S. HAUVSEPIAN
582 PALISADE AVE.
JERSEY CITY HEIGHTS, N. J.

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱՂԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ԿԵՆՍՑ ԱՊԸ ՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել
է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը
քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշ-
կին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ
տարին այսչափ թալէն, 20 կամ 30 կամ
աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր
ժառանգորդք կ'ընդունին հազար թալէն,
եթէ պայմանն հազար թալէնի է, կամ
մինչև հինգ հազար թալէն, ըստ պայմա-
նին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի,
և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ,
և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանա-
դրեալ հազար կամ աւելի թալէն կը
վճարուին ընկերութեանս կողմանէ այն
ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն
կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու
«Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի անշե-
կութիւն տալ:

C. F. RANDALL

177 Front ST.

Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի
արգոյ Հայ հասարակութեան թէ իմ վե-
րոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և ը-
պրներ կը վաճառեմ այնպիսի գներով և
այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը
լինի իմ Հայ հաճախորդաց:

Ծանուցանելով ևս թէ բացարձակա-
պէս և ՄԻՍՏՆ Մէկ Գին ունիմ, կը սպա-
ռեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգու-
նօք

Ձերդ Բանտօլ

THE WORCESTER MECHANICAL SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻԲՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆԷ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողու-
թիւններն կրնան ապահովապէս դնել վե-
րոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը
ճարէ Յուսկար, Ապրիլ, Յուլիս և Հոկտե-
մբեր կէսէն հաշուելով:

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորա-
կան կրթութեան, բազում ձեւերով բացա-
ւորեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գա-
պարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի
գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:



ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ
ՈՒ ԱՊՍԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք» ի
մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գա-
բրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական
տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հան-
դերձ պատուական և լաւ յաջողեալ
պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ
կամ 50 սանթիմ:

ԱՂԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ
հանրային ուշադրութիւնն աւելի զբաղե-
ցունելու և կարող գրիչներն նոյն կենսա-
կան խնդրոյ վերայ շարժել տալու նպա-
տակաւ իւր ընծայուած է այս ուսում-
նասիրութիւն: Գինն է 50 սանթիմ կամ
10 սէնթ:

HOPKINS & ATKINS
PATENTS
Washington, D.C. 20
years' experience
write for information



SECOND HAND BICYCLES

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԵՏԵԼԱՆԻՆԵՐ

Այնպէս կը մորոշեմք որ մորի պէս կ'երևի
և կը վաճառեմք այն գնով որ մեզի արժած է՝
վասնզի չեմք ուղեր զալ եղամակին պահել
զայնս: Հեծելամեքներն կրնաք ձոս գործածել
և աղա տանել ձեր սիրելի հայրենիքն:

Լ. Մ. Ալեքսանդր, L. M. Alexander
191 Front st. Worcester Mass.

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ա Ք Ո Ր Ծ

(Հաստատեալ է 1849)

65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
չափաւոր գնով

ՊԱՏՈՒՀԱՆԻ ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐ, աժան եւ
պատուական պիտի գանէք մեր խանութն,
հասն 20, 25, 30, սէնթի: Նաեւ պա-
տի թուղթ: Հրամայէք ի

250 Main ST. (Մէյն փողոց)
WORCESTER MASS.
Ձրանք Հօէի միջերանոցն

Ո՞ր Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր
ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկ-
ներ, և ձեր բանին կուգան իմ գներս: Իմ
անունս Լաչանս է, և խանութս կը գտ-
նուի Ֆրոնթ սթրիթի 60 նիւմէրոն: Մի-
այն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ:
Ո՞վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատ-
ցունել գին կտրելու համար, և ո՞վ որ
չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ
և իմ ընտիր կոշիկներն փորձէ:

T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԴԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց
չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է
385 Մէյն Փողոց, Ուուսթըր,
385 Main St. Worcester, Mass.

Յակոր Էքիզեան Կարապետ Էքիզեան
30 Eddy Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԱՐԵՐ Յ. ԻՅԻՂԱՆԵՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան

Էքիզեան եղբայր թէ Միացեալ Նա-
հանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու
տուներու շահերն միևնոյն տան վեբաբե-
րելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց
դրամատանց միոյն հետ համաձայնութիւն
մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմե-
րն ստակի փոխադրութեան գներուն բա-
ւական տարբերութիւն մը ձեռք բերած
ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ա-
մենէն վար գներով ստակի փոխադրու-
թիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուր-
քիոյ կողմերն: Անոնք որ կը կարօտին ըս-
տակ զրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս,
Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալա-
թիա, Բալու, Ակն, Արաբկեր, Չիմիչկէզէկ,
Չունքուշ, ընդհանուր չըջականերով,
պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց
հասցէներուն, որով իրենց փափաքանաց
համեմատ պիտի ստանան անմիջապէս ի-
րենց փոխանակագրերն ամենէն գոհացու-
ցիչ կերպով, և փոխարէնը պիտի գան-
ձուին առանց դժուարութեան և առանց
որ և է ծախքի մի հարկ ունենալու:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 77 Էվինինու Նիւ Եորք
267 և 277 Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ Ա Յ Ր Ի Է Լ Ե Ա Ն